ԱԿԱՐԳԻ ԳՈՐԾԻՆ ՅԵՂԵՔ ՊԱՏՐԱՍՏ!

0120-10

Չ 831

329.150.5

# ԿԱՏԱՐԵՆՔ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ

371.8
Կ-28

Համ Լ.ԿՅԵՄ Անդրյերկոմին
կից պիոներ Անդրբյուրո

ԹԻՖԼԻՍ, 1931 Թ.

371.8
Կ-28

Թիֆլիս, տպարան լրագրների հրատարակչության «Կոլլեկտիվ»

Գլավլիտ № 254 Տիրաժ 1.000

Պատվեր № 514.

ՀՀ Ազգային գրադարան
NL0229718

# ԳՈՐԾՆԱԿԱՆ ՊԼԱՆ.

Համ Լ.Կ.ՅԵ.Մ. Անդրյերկոմին կից Անդրյերպիոներ բյուրոն Անդրհողժողկոմի, Անդրկոլխոզկենտրոնի հետ, յելնելով Համամիութենական պայմանագրից, վորը կնքված ե Համ.Լ.Կ.ՅԵ.Մ. Կենտկոմին կից պիոներ կետ բյուրոյի և Հողժողկոմի, Լուսժողկոմի. գյուղատնտեսական կոոպերացիայի հետ, աշխատում ե պայմանագրի հետ կատարել հնգամյակի 3 րդ տարվա սոցիալիստական հողագործության աշխատանքները:

## ԳԼԽԱՎՈՐ ԽՆԴԻՐԸ·

1. Պայմանագիրը հանդիսանում ե Անդրկովկասյան պիոներների և դպրոցականների հարվածային և առանձնահատուկ խնդիրներից մեկը՝ սոցիալիստական գյուղատնտեսության վերելքի հնգամյակի 3-րդ վճռական տարում: Գործնական պլանը իրանից ներկայացնում ե գործնական գործողություն լրացնելու Համամիութենական պայմանագիրը Անդրկովկասյան պայմանագրից յելնելով:

2. Պիոներ կազմակերպության և դպրոցականների ոգնությունը սոցիալիստական գյուղատնտեսության վերակառուցմանը պետք ե լինի ոգնել այդ խնդրում կուսակցությանը և կոմսոմոլին կատարելու Անդրյերկուսկոմի 12/II 31 թվի վորոշումը կոլխոզ շարժման վերաբերյալ Անդրֆեդերացիայում, այնպես վոր բոլոր գործնական աշխատանքները յելնի Անդրյերկոմի վորոշումից:

50.051

21.05.2013

3. Պայմանագրի վճռական խնդիրը պետք է հանդիսանա նախապատրաստվել ու կատարել II-րդ բոլշևիկյան գյուղատնտեսական գարնանացանի կամպանիան։

## ԲԵՐՔԻ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ.

1. Ամեն մի պիոներ կոլլեկտիվ դպրոցի հետ միասին, գյուղատնտեսական և գարնանացանի կամպանիային պետք է սորտիրովկայի յենթարկի մի տոն սերմացու, և թունավորի 4 տոն, վորպեսզի, կատարվի 5,000 տոնի սորտիրովկա, և 1,250 տոնի թունավորում։

2. Ամեն մի պիոներ կոլլեկտիվ և դպրոց պետք է կազմակերպեն ստուգում բոլոր տեսակ կուլտուրաների նկատմամբ, կոլխոզ սովխոզների միությունների, այնպես վոր սկսած 10-ից փետրվարի վերջացրած 20-ին մարտի այդ աշխատանքը կատարված լինի։

3. Ամեն մի կոլլեկտիվ և դպրոց պետք է սերմերի ընտրում և մաքրում կատարի, բացատրե գյուղացիներին այդ օգուտի մասին (ֆոսֆորի գործածում և այլն)։ Այնպես վոր ամբողջ Անդրկովկասում կատարվի 2.500 տոն։ Այնպես, վոր 100 այդպիսիների փորձնական աշխատանք կատարվի։ Կազմակերպել ամառային էքսկուրսիաներ, քախան տալու համար 300-ի անպայման, (քարեր հավաքել քախանել և այլն)։

## ԿՈՒԼՏՈՒՐԱԿԱՆ ԲՈՒՅՍԵՐԻ ՀԱՄԱՐ.

Պիոներների դպրոցականների օգնությանը պետք է լինի նրանում, վոր նրանք, ագիտացիայի միջոցով բացատրեն բարձրացնելու կուլտուրական բույսերի բերքը։ Այդ կոլխոզների սովխոզների առաջնակարգ խնդիրներից մեկ



Гос. Библиотека ՀՍՍՌ-Арм.ССР
42675-63

1. Բամբակի ֆրոնտ—հիմք դնել դպրոցներին կից 300 փորձնական բամբակային շրջաններ, բարձրացնելով բամբակի սերմի վորակը կոլխոզ սովխոզներում։

2. Մյուս կուլտուրական բույսերի բնագավառում (լուֆ և այլն) հիմք գցել փորձնական դաշտերի 100 շրջան։

3. Կուլտուրական բույսեր (բացի բամբակից) դնել դպրոցներին կից 200 փորձնական շրջան (ռամի 30-շրջան 80 կանեփ 60 լեն, 10 չայ)։

Շոլկոարդյունաբերական բնագավառում հիմք գցել 250 փորձնական ուջասկ, կոլխոզներին և դպրոցներին կից։ Այդ ասպարեզում աշակերտությունը և պիոներները մեծ մասնակցություն պետք է ունենան, փորձնական աշխատանքի օրինակով, ցույց տալ կոլխոզ և սովխոզներին շոլկի շատ լավ ստանալու օրինակը։ Զարգացնելով շոլկի կոկոնները, այդ աշխատանքների վրա նաև լուրջ ուշադրություն դարձնել գյուղում։ Պայքար մղելով այդ աշխատանքներում խոչընդոտների դեմ։

4. Մթերքային կուլտուրաների բնագավառում (բաչուկ շաքարի, խիար, բողկ, քալամ և այլն). Այդ գործը լայնացնել, վորտեղ վոր չկա հիմք դնել կոլխոզ սովխոզներում, պիոներների և աշակերտության միջոցով բարձրացնել ծաղկանոցների վորակը և լայնացնել 1,000-ից վոչ պակաս մեկը մի օրավարից։

## ԱՆԱՍՆԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ.

1. Կոլլեկտիվը դպրոցի հետ միասին վերցնում է 4,000 խոզի կերակրելու պահելու շեֆություն և 3,000, ճուտերի ռացիոնալ կերպով պահելու կոլխոզ սովխոզ-

ներում։ Հիմք դնել 200 ուչասկ կուլտուրական կերեր պատրաստելու։ Ամբողջապես ոգնել կուսակցությանը կոմսոմոլին սելսուի կազմակերպման գործում, պայքարելով լրացնելու 1931 թվի պլանը Անդրկովկասում։ Դրա հետ միասին պիոներները և դպրոցականները կազմակերպում են ռասկլուդկա, վոչ պակաս մեկ ռելուսից կոլխոզի և սովխոզի։

2. Աշխատել ենկապատարի ոգնությամբ 20,000 հավ և վոչ պակաս մեկ միլիոն ձու։

## ԲԱՆՋԱՐԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՍ.

1. Պիոներները դպրոցի հետ միասին հիմք դնել 300 գա այգու, վորից, 50 գա (որավար) հաղողի այգու և ամբողջ Անդրկովկասում 10 գա չայի։

2. Ծառավունկի որը ամեն մի կոլլեկտիվ և դըպրոց 100 նոր ծառներ, վորպեսզի ամբողջ Անդրկովկասում տնկեն 500,000 ծառեր։

## ՊԱՅՔԱՐ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՎՆԱՍԱ-ՏՈՒՆԵՐԻ ԴԵՄ.

Գարնանացանի և գյուղատնտեսական կամպանիայի ընթացքում (1931 թ.) պիոներ կազմակերպությունը աշակերտության հետ միասին պետք է մասսայական արշավ կազմակերպի պայքար վնասատուների դեմ դարձում և այգիներում։ Վոչնչացնել ամբողջ Անդրկովկասում մեկ միլիոն մկներ, մաքրել վնասականներից 5,000 գա այգի փորձնական դաշտեր։ Պատրաստել ոգտակար թռչունների համար բներ 50,000 (ամեն կոլլեկտիվ և դպրոց 10 հատ)։

## ՋՐԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎՈՒՄ.

Պատրաստել և մաքրել հողամասերի, այգիների առուները ամբողջ Անդրկովկասում 100 կիլոմետր, պիոներների և աշակերտության ածելով։



## ՃԱԿԱՌՆԵՐԻ ԲՆԱԳԱՎԱԱՌՈՒՄ.

Ամեն մի կոլլեկտիվ և դպրոց կոլխոզներին կից պետք է ունենա վոչ պակաս 50 հատ ճակառ (նապաստակի մի տեսակը)։

Ամբողջովին լրացնելու պայմանագիրը իրենց կողմից Համամիութենական հողժողկոմը, կոլխոզկենտրոնը, միությունների միությունը և գյուղկոոպերացիան, Անդրհողժողկոմը, Անդրկոլխոզկենտրոնը և գյուղատնտեսական կոոպերատիվը, Անդրֆեդերացիայում իրանց կողմից գործնական պլանում պետք է կատարեն հետևյալը։

1. Գործնական միջոցառումներով բավարարեն և աշակերտությանը անցկացնելու գյուղատնտեսական աշխատանքները կոլխոզներում սովխոզներում, պատրաստելով կադրը, տալով պոլիտեխնիկական դաստիրակչություն յերեխաներին։

2. Ցույց տալ գործնական աշխատանք դպրոցների պոլիտեխնիկայի գործին, կցել դպրոցները մեքենատրակտորային կայաններին։

3. Տեղական հողբաժինները, կոլխոզմիությունները և գյուղկոոպերատիվները, ուղարկեն շրջանային բյուրոններին սերմեր բոլոր կուլտուրաներով, տալով ցուցմունքներ յերեխաններին այդ բնագավառում։ Աշխատանքները հաջող անցկացնելու համար։

4. Հողորգանները հանրապետական, շրջանային կազմում են իրանց պլանը գործնական աշխատանքների, տալով ջոկերին մասնագետ աշխատողներ ոգնելու համար, (գյուղատնտես, այգեգործ, անասնապահ), տալով մեթոդական ցուցմունքներ յերեխաններին գյուղատնտեսության բնագավառում։

Անդրհողժողկոմը, Անդրկոլխոզկենտրոնը, Անդրգյուղմիությունը 1931 թվին կազմակերպում են 10 մանկական գյուղատնտեսական կայաններ, շրջաններում կոլխոզ սովխոզներում դպրոցներին կից։

5. Կուլտ կենթաղային կոմիսիաները կոլխոզ սովխոզների, առանձնացնեն դրամական ֆոնդեր, պատանեյությանը օգնելու համար։ Կոլխոզ սովխոզներում կամպանիայի ընթացքում աշխատանքները կյանքի մեջ կիրառելու 1931 թ.։

6. Պարտադրել գյուղխոզ ինստիտուտին, աշխատելու գործնականում պիոներ-տան հետ միասին, պատանեկությանը տալով գաղափար և օգնության կոլխոզ և գյուղատնտեսական աշխատանքների բնագավառում։

Անդրկովկասյան ինստիտուտը կերպանափոխել առանձնացնելով մի ջոկ մասնագետներից տալու գործնական օգնության աշխատանքներին, պատանեկական կոմմունիստական Անդրկովկասյան տան հետ միասին։

Անդրկոլխոզմիությունը առանձնացնում է առանձնահատուկ աշխատող, գյուղատնտեսական աշխատանքը տանելու պատանեկության մեջ։ Անդրգյուղմիություն և Անդրկոլխոզկենտրոնի ագրո սեկտորները աշխատում են տալ մեթոդական նամակ և բրոշյուր, Անդրկովկասյան պատանեկական կոմմունիստական շարժման տան և Անդրպիոներ բյուրոյի հետ միասին, նոր կուլտուրական բույսերի տարածման գյուղատնտեսական խնդիրների շուրջը։

7. Կազմակերպել պատանեյության աշխատանքի պաշտպանության գործը կոլխոզ սովխոզներում, չթողնելով պատանեյության շահագործումը ամեն տեսակի, տալ դիրեկտիվ կոլխոզ սովխոզներին, կյանքի մեջ կեր



տանել պատանեկության աշխպաշտպանության գործը։ Կազմակերպել աշխատանքի հասկացողության գործը պատանեկության մեջ։ Տալ նյութական միջոց Անդրպիոներ բյուրոյին հրավիրելու Անդրկովկասյան խորդակության աշխպաշտպանության գործը պատանեկության մեջ 1931 թվին։

8. Պարտադրել Անդրկովկասյան գյուղատնտեսական մատակարարման կենտրոնին, 1931 թվին մտցնելու պլանում մեքենամատակարարման, տալու գյուղատնտեսական ինվենտարներ պատանեկության համար և առանձին ենկուբատոր։

9. Ուղարկել Անդրկովկասյան Ինտերնացիոնալ լագեր 1931 թվին 50 հոգի պիոներներ, կոլխոզ լավ հարվածայիններ, նույնպես պիոներ և դպրոցականներ վորոնք կկատարեն պայմանագիրը։ Հանգստի հետ միասին Անդրկոլխոզկենտրոնը կազմակերպում է կուրսեր պիոներների համար գյուղատնտեսության շուրջը։

10. Կցել կոլխոզ սովխոզներին, դպրոցներին և կոլլեկտիվներին մասնագետներ լրիվ կատարելու գարնանացանի պլանը։

11. Անդրհողժողկոմը, Անդրկոլխոզկենտրոնը, Անդրգյուղմիություն Անդրբամբակային ինստիտուտին ձեզ կազմակերպում են, մեքենագործական տեխնիկում և անասնապահական տեխնիկում։ Ունենալով 3 սեկտոր պատրաստել ղեկավարներ այդ պիոներների աշխատանքները ղեկավարելու համար։

12. Անդրհողժողկոմը, Անդրկոլխոզկենտրոնը և Անդրգյուղմիությանը առանձնացնում են նյութական միջոցներ, ուղարկելու բրիգադներ, գյուղական դպրոցներին և պիոներական կոլլեկտիվներին օգնելու համար։ Ցեվ անցկացնելու գարնանացանի կամպանիան,

տալով գործնական ոժանդակության տեղերին պլանները լրիվ կատարելու համար։ 23 մայիսի (100 հոգու պիոներներ) անցկացնելու Անդրկովկասյան կոնֆերանս, գյուղական պիոներների և դպրոցականների, կոլխոզ եստաֆետի վերջում, տալու ֆինիշ։

13. Գործնական պլանում կատարել, առանձնացնելով ֆոնդերը տալու նվիրատվություններ հետևյալ կարգով՝

ա) Անդրկովկասյան Ինտերնացիոնալ լագեր ուղարկել 50 հոգի պիոներ։

բ) եքսկուրսիա ուղարկել Խորհրդային միությունը 20 հոգի։

գ) կազմակերպել և նյութականապես բավարարել 10 նոր կոլվարական կաբինետներ։

դ) կազմակերպել ֆիզկուլտ առողջապահական 10 հատ հրապարակ։

Ստուգում կատարել 1 մայիսի 1931 թվի և 1-ին հունվարին 1932 թ.։

Համ ԼԿՅԵՄ Անդրյերկոմին կից պիոներական Անդրյերկրյուրոյի նախագահ՝ (Իվանով)
Անդրհողժողկոմ տեղակալ (Բիրուcով)
Անդրկոլխոզկենտրոն (Կախրամանով)
Անդրգյուղմիություն (Պեչիկյան)

---



# ԱՆԴՐԿՈՎԿԱՍՅԱՆ ՊԻՈՆԵՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ԲՈԼՈՐ ԴՊՐՈՑՆԵՐԸ ՊԵՏՔ Ե ԱՆՄԻՋԱՊԵՍ ԼԾՎԵՆ ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ՊԻՈՆԵՐԱԿԱՆ ԿՈԼԽՈԶԱՅԻՆ ԵՍՏԱՖԵՏԻՆ.

1. Պիոներական կոլխոզային եստաֆետը հանդիսանում է գլխավոր և առանձնահատուկ մեթոդը գործնական և մեթոդական աշխատանքների պիոներական կոլեկտիվում և դպրոցում։ Վճռական պայքար գերակատարելու 1931 թվի յերկրորդ բոլշևիկյան գարնանացանն և գյուղատնտեսական կամպանիան։ Պիոներ կազմակերպությունն իր աշխատանքները պետք է վերածելի կոլխոզային եստաֆետի հիման վրա, վորպեսզի այդ բոլորը չինի Համամիութենական սոցիալիստական պայմանագրից, վորը մշակված է Համ. ԼԿՅԵՄ-ին կից կենտրոնական պիոներ բյուրոյի Լուսժողկոմի, Հողժողկոմի, Կոլխոզկենտրոնի Միությունների Միության և գյուղատնտեսական կոոպերացիայի հետ 1931 թվին։ Կոլխոզային եստաֆետն աջող անցկացնելու համար, հարկավոր է շուտափույթ կերպով Անդրկովկասյան պիոներ կազմակերպությունն իր աշխատանքները վերակառուցի-կոլխոզային եստաֆետի

շուրջը, մասնակից անելով այդ խոշոր նշանակություն ունեցող հարցին բոլոր դպրոցի աշակերտներին և աշխատավորների յերեխաներին, ոգնել կուսակցական և կոմյերիտական կազմակերպություններին բոլշևիկական թափով աջող կատարելու 31 թվի գարնանացանի բոլշևիկական պլանը։

2. Համ. ԼԿՅԵՄ 9-րդ համագումարի բացման որը հունվարի 16-ին, պիոներական կազմակերպությունը կոչ է արել համագումարից համամիութենական կոլխոզ եստաֆետ անցկացնելու և 23-ին մայիսի 31 թվի այդ որը, վոր պիոներ կազմակերպությունը պիտի ընդունի Լենինյան անունը նշանակված աշխատանքներն ստուգելուց հետո։ Համամիութենական կոլխոզային եստաֆետին մասնակից անելով բոլոր պիոներներին և դպրոցի յերեխաներին, տանելով աշխատանքներ կոլխոզներում, սովխոզներում, միևնույն ժամանակ պետք է ոգտագործել գյուղի դպրոցների պրոֆտեխնիզացիայի գործում։

Անդրկովկասում կոլխոզային եստաֆետը կատարելու համար Համ. ԼԿՅԵՄ Անդրյերկոմին կից պիոներ Անդր. յեր. բյուրոն մատնանշում է 10 մարշրուտ կոլխոզային եստաֆետ անցկացնելու համար։

1. Դեպի կոլլեկտիվացում.

2. Դեպի գյուղատնտեսական մեքենայացում.

3. Դեպի սոցիալիստական աշխատանք կոլխոզներում.

4. Դեպի կուլտուրա.

5. Դեպի կուլտուրական բույսերի, ցանքսերի և այլն մշակում։

6. Դեպի գյուղատնտեսական կուլտուրայի զարգացում.



7. Դեպի հացաբերման զարգացում.

8. Դեպի բամբակ.

9. Դեպի անասնապահությունը և նրա կերի զարգացումը

10. Դեպի տեխնիկական բույսերի տարածում. (կենաֆ, շյուկ և այլն)։

Կոլխոզային արշավն անցկացնելու համար, Անդրյեր. բյուրոյի կարևոր է համարեցնել տեղի պայմանների հետ, և անպայման ոգնել և ոգնության կանչել տեղի կուս. և կոմյերիտ կազմակերպություններին, մասնակցելով նրանց բջիջի աշխատանքներին, նրա ամբողջ աշխատանքի պլաններին, մարշրուտը կարող են փոփոխության յենթարկել այն պայմաններում, յեթե այդպիսի աշխատանք հնարավոր չի կատարել տեղի շրջանում կամ հանրապետությունում։ Գյուղի միջավայրում բուսնող բույսերի և ուրիշ խնդիրների նկատմամբ։ Տաս մարշրուտը պետք է անցկացնել ռայոններում և կոլլեկտիվներում։

## 1-ԻՆ ՄԱՐՇՐՈՒՏ

Դեպի կոլլեկտիվացում. Հնգամյակի 2-րդ տարվա ընթացքում գյուղատնտեսության մեկ չորրորդ մասը կոլլեկտիվացման է յենթարկված։ Հնգամյակի 3-րդ տարվա խնդիրներն են միջին թվով ամբողջ միության մասշտաբով 31 թվին կոլլեկտիվացման յենթարկել վոչ պակաս 50 տոկոսից (Հ. Կ. Կ. (բ) Կ. դեկտեմբերյան պլենումի վորոշումից)։ Անդրկովկասում համաձայն կուսակցական և կառավարության վորոշումին, պայմաններում ստեղծել 31 թվում կոլլեկտիվացման յենթարկել միջին թվով 20—25 տոկոս, իսկ բամբակագործման և առաջնակարգ շրջաններում կոլլեկտիվացման

յենթարկել 50 տոկոս, վորտեղ գյուղատնտեսությունը մեքենայացված ե և հնարավոր ե կոլլեկտիվացման յենթարկել ազգաբնակչության 50 տոկոսը։ Համամիութենական Հողժողկոմատի Կոլխոզկենտրոնը գյուղատնտեսական կոոպերացիայի հետ պիոներներն և դըպրոցականների պայմանագրում պարտավորություն ե վերցված ոգնել կուսակցության և կոմսոմոլին կատարելու 1931 թվին դրված խնդիրները կոլլեկտիվացման բնագավառում։

Ինչ ե հարկավոր անել, վորպեսզի կարողանանք կատարել այդ պարտականությունը, վորը մեր վրա յեն վերցրել ոգնելու կուսակցական կազմակերպությանը։

1. Ոգնել և հասկացնել անհատական գյուղացիների կոլլեկտիվների աջողության և նրա մշակման ոգուտը։ Դրա համար պարզել ինչ բերք ունի կոլլեկտիվը մի հեկտար հողից, ինչքան ոգուտ ե ստացել գյուղացին և անհատական գյուղացին ինչքան ե ոգուտ ստացել իր մի հեկտար հողից։ Գյուղացու համար պարզել, թե ինչքան ոգուտ ե մեքենայով հող մշակել բերքի բարձրացման գործում և առհասարակ հասկացնել գյուղացուն, վոր նրա տնտեսական դրության բարելավման միակ ճանապարհը կոլլեկտիվացումն և կոլլեկտիվ աշխատանքն ե, վորը կբարելավի գյուղացու տրտեսությունը։ Որինակի համար հարկավոր ե ասել, վոր Ներքին Վոլգայի շրջաններում նրանց կոլխոզներում 1930 թվին ցանել են ամեն մի տնտեսություն 17 գա, իսկ 1929 թվին մինչև նույն կոլխոզում միևնույն գյուղացիները ցանել են ամեն մի տնտեսության համար 8 գա։ Այդ նշանակում ե, վոր կոլլեկտիվ աշխատանքը միակ ճանապարհն ե բավարարելու գյուղացու



տնտեսական դրությունը։ Այսպիսի որինակներով պիոներները պիտի հասկացնեն հասակավոր գյուղացիներին, չքավորներին ու միջակներին, վորոնք մինչև հիմա կոլխոզում չեն, բացատրելով նրանց կոլլեկտիվ աշխատանքի բովանդակությունը, Ինչպես պետք ե տանել գործնական աշխատանքը, միևնույն ժամանակ հարկավոր ե գյուղացիներին պատմել, թե ինչպիսի արտոնություններ են ստանում կառավարությունից (ազատվում են գյուղատնտեսական հարկերից, ստանում են գյուղատնտեսական մեքենա և վարկեր)։ Պիոներները և դպրոցի աշակերտները միևնույն ժամանակ պետք ե պատմեն գյուղացիներին ինչ նշանակություն ունի պայմանագիրը, վորոնք կապվում են կոլխոզների և մեքենայատրակտորային կայանների վարչությունների հետ և բոլոր այն արտոնությունները, վորն ըստանում են կոլխոզները։ Ագիտացիոն աշխատանքների մեթոդը դեպի կոլլեկտիվացում ամեն մի 10—15 անհատական տնտեսություններին ամրացնել մի քանի պիոներների և դպրոցականներ, գյուղացիներին ոգնելու համար և պլանային սիստեմով գյուղացիների հետ թերթ կարդալ մի շարք հոդվածներ, վորոնք նկարագրում են կոլխոզային շինարարության հեղաշրջման մասին, և կառավարության միջոցառումները կոլխոզշարժման բնագավառում։ Միևնույն ժամանակ հարկավոր ե անհատականների յերեխաների հետ զրույց տանել, թե ինչու կոլխոզում լինելը լավ ե, քան թե չլինելը։ Եքսկուրսիաներ կազմակերպել մոտիկ կոլխոզները, վորին մասնակից անել վողջ կոլխոզների կանանց և յերեխաներին և այստեղ նրանց ցույց տալ, թե ինչպես են աշխատում և կոլխոզները և նրանք կիմանան բոլոր արտոնությունները և ծանոթանալ

կոլխոզային կյանքին։ Լույս ընծայել հատուկ պատի թերթեր, վորտեղ գրել հոդվածներ կոլխոզի աշխատանքների մասին, թվերով ցույց տալ ցանքսի բերքերի ավելացումը և այլն։ Զրույցներ, ժողովներ կազմակերպել մասնակից անելով բոլոր վոչ կոլխոզնիկներին։ Առաջի հերթին ամեն մի աշակերտ և պիոներ պիտի հասկացնի իր ծնողին կոլխոզում գրվելու ոգուտը և համաձայնեցնի իր քրոջը, հորը, մորը և քաշի դեպի կոլխոզ։

## ՈՒԺԵՂԱՑՆԵԼ ՊԱՅՔԱՐ ԿՈՒԼԱԿԻ ԵԼԵՄԵՆՏՆԵՐԻ ՅԵՎ ՆՐԱ ԱԳԵՆՏՆԵՐԻ ԴԵՄ

Կոլխոզները մահ են բերում կուլակներին, համատարած կոլեկտիվացումը վոչնչացնում է կուլակին, վորպես դասակարգ, կուլակը կոլեկտիվի առաջին թշնամին է։ Կուլակն աշխատում է չթողնել զարգանա կոլխոզը, փորձեր է կատարում սպանել կոլխոզնիկ ակտիվիստներին, աշխատում է գյուղացիներին ագիտացիայով հետ մղել կոլխոզից, Ահա այսպիսի պրովոկացիաներով կուլակներն աշխատում են յետ քաշել գյուղացուն կոլխոզից։ Ամեն միջոցով աշխատում են խանգարել կոլեկտիվացման թափը, չեն թողնում անհատականներին մտնելու կոլխոզ։ Պիոներները պետք է կուսակցության և կոմյերիտմիության հետ միասին անհաշտ պայքար մղեն կուլակի, նրա ագիտացիայի և նրա ագենտների դեմ, պատռելով նրանց քողն աշխատավոր գյուղացիության առաջ. նմանապես պարզել կուլակի ագենտ տերտերների, ժամկոչների և հակախորհրդային ելեմենտների դիմակը։ Հարկավոր է հասարակական կարծիք ստեղծել այդ հարցի շուրջը աշխատելով, վոր վոչ մի կուլակ ներս չդծկվի կոլխոզ,



42675-63

նա ամեն կերպ աշխատում է մտնել կոլխոզ, վորպեսզի կարողանա միջից քանդի այդ աշխատանքը։ Այն գյուղացիները, վորոնք չեն հասկացել կոլխոզի արտոնությունները և չգիտեն կոլխոզի նպատակներն ու խընդիրները, հարկավոր է նրանց միացնել գյուղատնտեսական արտելներում։ Այն շրջաններում վորտեղ դեռ ցածր է տեխնիկական կուլտուրան և վոչ բավարար է կազմակերպված բատրակությունը և չքավորությունը տանել ագիտացիոն բացատրական աշխատանք գյուղացիության մեջ կազմակերպելու հողագործական ոգտագործման ընկերություններ վորպես նախնական ձեվ՝ հետագայում գյուղատնտեսական արտելների։ Իրագործելով և ընդգրկելով չքավորներին միջակներին հողօգտագործման արտելներից դեպի կոլխոզ։

## 2-ՐԴ ՄԱՐՇՐՈՒՏ

## ԴԵՊԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԵՔԵՆԱՅԱՑՈՒՄԸ.

1931 թվի գարնանացանի ոջող անցկացման խոշոր պայմաններից մեկն հանդիսանում է գյուղատընտեսական մեքենաների և մյուս կողմից մի շարք գործիքների պատրաստման և վերանորոգման գործը։

Համամիութենական հողժողկոմատի հետ կապված պայմանագրում պիոներները պարտավորություն են վերցրել կռիվ մղել նրանց դեմ—ովքեր, վոր վատ են վերաբերվում գյուղատնտեսական գործիքներին, տրակտորների և այլի հետ. միևնույն ժամանակ պիոներները պետք է շեֆություն վերցնեն տրակտորների գյուղատնտեսական մեքենաների խնամելու գործում։

Կարևոր է, վոր բոլոր իմանանան՝ և կյանքի մեջ կիրառեն մեքենայացման գործը ուսումնասիրելով դըպրոցում և պիոներական կոլեկտիվներում։





Гос Библиотека ՀՍՍՌ-Арм.ССР

Անդրկովկասյան Ժողկոմխորհը վորոշում է հանել Անդրկովկասում 18 մեքենատրակտորային կայաններ շինել, ունեցած 56-ից բացի վորի ուժով պիտի ցծնվի 213 հազար հեկտար հող, վորից բամբակ—182 հազար հեկտար։

Մեքենաների նորոգումը 75 տոկ. վերջացնել մինչև փետրվարի 5-ը և մինչ մարտի 15-ը մնացած մեքենաների նորոգումը. Ամեն մի քեքենա պիտի աշխատի սուտկեն 20 ժամ ռացիոնալ կերպով ոգտագործելով բոլոր մեքենաները գարնանացանի կամպանիան անցկացնելու համար, միևնույն ժամանակ 100 տոկ. ոգտագործել կենդանի լծկան ուժերը գյուղում. ուժեղացնելով սոցմրցումը և հարվածայնությունը այդ ասպարեզում։

## 3-ՐԴ ՄԱՐՇՐՈՒՏ

### ԲԱԺԱՆՎՈՒՄ Է 2-ՈՒ ՄԱՍԻ.

Առաջին մեքենաների պատրաստումը և 2-րդ մեքենաների ոգտագործումը ռացիոնալ կերպով։

1. Ամբողջ ունեցած գյուղատնտեսական ինվենտարի կիրառելը։

2. Մեքենաների վերանորոգումը և պատրաստումը գարնանացանի համար։

3. Մեքենաների և նրանց մասերի ռացիոնալ ոգտագործումը աշխատանքի ժամանակ։

4. Գարնանացանի ծրագիրը հաստատել ամեն մի տնտեսության և մեքենաների հանդեպ։

5. Նավթամեքենաների համար հարմար միջոցներ պատրաստել։

6. Տրակտորկենտրոնի փոխարությամբ գյուղացիության մեջ. ծավալել և մասնակից անել տրակտորաշինարարությանը։



Պիոներ կոլլեկտիվը պետք է ցուցակագրի բոլոր մեքենաների դրությունը թե վորտեղ է լինելու և ոգտագործվելու և ինչքան վերանորոգում է պահանջում գյուղացիների մեքենաները և այդ տալ գյուղխորհրդին և ուսուցչին. միևնույն ժամանակ ստուգել թե ինչքան արհեստանոցներ են հարկավոր գյուղատնտեսական մեքենաների վերանորոգման համար. այդ բոլոր արդյունքերի մասին հայտնել գյուղխորհրդին իրազեկ դարձնելով նաև կոլխոզնիկներին հասարակական ժողովների միջոցով։

Պայքարելով այդ գործում խանգարողների դեմ, բյուրոկրատների գինեմոլների, թայֆաբազների, կիսատ պռատ աշխատողների դեմ և պլանները լրիվ ժամանակին չկատարողներին, նրանց պատկերը ցուցադրել ու պարզել մասսաների առաջ գրելով պատի թերթում և մամուլում։

Ցերեխաները գյուղատնտեսական մեքենաների նորոգման գործում պիտի անձամբ մասնակցեն ոգտագործելով այդ իրերը ծանոթանալով մեքենայի և մեքենայի կառուցվածքի հետ և առանձին-առանձին մասնիկները, ինչպես մաքրել պահպանել փչանալուց միևնույն ժամանակ ուժեղ աշխատանք տանել մեքենաների նորման լրիվ կիրառելու համար, պարզել թե մեքենան լրիվ ռացիոնալ կերպով դաշտում ոգտագործվում է թե վոչ, խոսել մեքենաների վրա աշխատողների հետ, արտադրության պլանը լրիվ կիրառելու համար։

## ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԸ ԴԱՇՏՈՒՄ·

Հետևել, վորպեսի մեքենան յուր բանվորական ոըը լրիվ ոգտագործի ուժեղացնել աշխատանքը. ամեն-

ների միջև, յերբ բանվորը փոխվում ե մյուս բանվորի իր ժամանակին փոխարինի և մեքենան առանց մաքրել չթողնել. հետևել սերմի մաքրման և թունավորման պարարտման վրա, մեքենաների վերաշխատողների ուշադրությունը նույնպես կենտրոնացնել այդ գործում, այնպես անել, վոր յերեխաները իրենց ուժերի չափ մասնակցություն ունենան այդ աշխատանքներում: Վերահաս լինել նավթամթերքների ռացիոնալ ոգտագործման և ժամանակին մեքենաների պահանջները բավարարելու, ոգնել մեքենաարհեստանոցների աշխատանքներին, կոտրած մեքենաների և նրանց մասնիկները հավաքել:

Մեքենաների և նրանց ոգտագործման բնագավառում մեքենավարների մեջ ուժեղացնել սոց-մրցումը և հարվածայնությունը, պայքար մղել դիտավորյալ կերպով մեքենաները փչացողների դեմ և նմանապես կռվել կուլակի հակաաշխատանքների դեմ, վորը աշխատում ե պայքար մղել մեքենաների դեմ:

## 4-ՐԴ ՄԱՐՇՐՈՒՏ

Աշխատանքները ուղիղ կազմակերպելու սոցիալիստական մրցման և հարվածայնության լոզունգի տակ ոգնել գարնանացանի պլանը լրիվ կատարման և կոլխոզների ուժեղացման գործում: Սոցմրցման ուժեղացումը կոլխոզնիկների հետ համերաշխության ստեղծումը բոլոր աշխատանքների բնագավառում, պայքար աշխատանքները ուժեղացման գործում, կարգապահության և դիսցիպլինիայի ուժեղացման գործնական աշխատանքներում և պիոներների ու աշակերտության դիսցիպլինան նույնպես մարշրուտը լրիվ կատարման գործում, դրա համար հարկավոր պատի թերթերում



հատուկ համարներ լույս ընծայել սոցմրցման և հարվածայնության ուժեղ թափը և ծավալումը գրել թերթերում: Որինակելի աշխատավորների շուրջը հասարակական կարծիք ստեղծել և աշխատանքների ընթացքում յետ մնացողների պատճառները պարզել և կարևոր միջոցների դիմել շուտափույթ այդ բացերը ուղղելու:

Ամեն մի պիոներ պիտի իր ծնողի հետ սոցիալիստական պայմանագիր կնքի, պայմանագրի մեջ պարտավորեցնի իր ծնողին հետևյալ աշխատանքներում.

ա) աշխատանքի ուժեղացման գիտաքննության և խելացի գաղափար ունենա, լավացնել աշխատանքի վորակը պարտավորեցնել իր ծնողին անտնտեսավարության ամեն մի յերևույթները վերացնելու նկատամամբ, կռվել գինեմոլության, թալփաբանության, մսխարարության դեմ, վորի միջոցով կռվել սոցիալիստական գիտակցությունը գյուղատնտեսության բնագավառում մտցնելու համար:

բ) Թեթև հեծելազորներների մեջ գտնվող պիոներները պետք ե արշավ կազմակերպեն, կոլխոզների արտադրական բրիգադաների վրա պարզելու բոլոր թերթի կողմերը. հայտնելով այդ մասին, կոլխոզմիությունների համապատասխան միջոցներ ձեռք առնելու, այդ աշխատանքը հանձնամբ ինքը պետք ե կատարել ջոկում գտնվող պիոները:

գ) պիոներներից ջոկատ ստեղծել այդ աշխատանքների ժամանակ պահպանելու թե կոլխոզվարչությունների և թե տնտեսական բոլոր որգանների հետ, հասցնելով նրանց բոլոր վորոշումները կոլխոզներին և գյուղացիության աշխատանքները ուժեղացնելու նկատառումով:

գ) պիոներները պիտի կազմակերպող լինեն յերեխաների աշխատանքը կոլխոզներում կանոնավորելու համար, պայքար մղել կուլակի շահագործման դեմ։

Յերիտասարդության աշխատանքի սոցիալիստական կազմակերպման խոշոր միջոցներից մեկն ե աշխատանքի ամուր կապն ե ուսման հետ, բոլոր դըպրոցները պիտի աշխատանքները վ'րակառուցեն ուսման հետ, յերեխաների մասնակից անելով կոլխոզների արտադրությանը։

ե) հարկավոր ե ուսումն և արտադրությունը կապել միմիանց կազմակերպելով կոմիսիաներ, վոր պետք ե ղեկավարի յերիտասարդության աշխատանքը կոլխոզում, պայքարելով յերեխաների աշխատանքի պաշտպանության համար և յերեխաների շահագործման դեմ չթողնելով յերեխաներին գիշերային աշխատանք կատարելու, այդ առթիվ լայն ու բացատրական աշխատանք տանել յերեխաների մեջ (12-ից 18 տարեկան բրոնիա 6 ժամից ավել չաշխատի)։

## 5-ՐԴ ՄԱՐՇՐՈՒՏ

## ԳՐՔԻ ԿՈՒԼՏՈՒՐԸ.

Ագրոանգրագիտության վերացումն, ագրոուսումը գյուղ մտցնելը, յերկու խոշոր պայմաններ են, վորոնք պիտի աջակցեն գյուղացիության կուլտուրական մակարդակի բարձրացմանը, կատարելու բոլշևիկյան յերկրորդ գարնանացանին։ Անցկացնելով Համամիութենական սոցմրցման պայմանագիրը պիոներական կազմակերպությունը խոստանում ե ոգնել կուսակցության և կոմսոմոլին գյուղում կուլտուրական հեղափոխություն մտցնելու համար, դրա համար այս մար-



շրուտում պետք ե պիոները կատարի իր բոլոր պարտականությունները։ Համամիութենական ժողկոմխորհը վորոշել ար այս գարնանացանի անցկացման ընթացքում գյուղում մասսայականապես վերացնել գոյություն ունեցող ագրոանգրագիտությունը, վոր պետք ե հավաքի իր շուրջը 6 միլիոն կոլխոզնիկ չքավոր և միջակ գյուղացիության. պիոներ կազմակերպությունները և դպրոցները այդ հարցում պետք ե կառավարության ոգնականը լինեն։

## ԳՈՐԾՆԱԿԱՆՈՒՄ ԻՆՉ Ե ՀԱՐԿԱՎՈՐ ԱՆԵԼ.

1. Կազմակերպել գրքի մասսայական տարածումը նմանապես ամսագրերի և թերթերի, ոգնելով փոստ արկղների կազմակերպմանը ժամանակին հասցնել այդ բոլոր բաժանորդագրերին և նմանապես հավաքել նոր բաժանորդներ դրա համար հարկավոր ե կազմակերպել կապ պահպանել բրիգադներ, անց կացնելով թերթի ընթերցման յերեկոներ, կանանց գյուղացիության համար. կապ պաշտպանելու բջիջների ագիտ-պրոպների հետ. ոգնել գյուղացիներին և խրճիթ-ընթերցարանների վարիչներին գրքերի ժուրնալների դասավորմանը և ոգտագործմանը, կազմակերպելով ժամանակին ստանալու և ոգտագործման գործը։

## ՎԵՐԱՑՆԵԼ ԿՈԼԽՈԶՆԻԿՆԵՐԻ ԱՆԳՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ.

1. Ոգնել լիկկայանների, կուրսերի, կար և ձևի, բարձրախոսների-կազմակերպմանը պիոներներից նշանակելով ղեկավարներ և հերթապահներ։

Շեվություն վերցնել բոլոր խմբակների և կուրսերի. մշտական ստուգել այդ կուրսերի և խմբակների հաճախումները, նույնպես անհատական շեֆություն

վերցնել, անգրագիտության վերացնելու գործում գյուղացիների, յերեխաների ծնողների, քույրերի և այլն։

## 6-ՐԴ ՄԱՐՇՐՈՒՏ

Հարկավոր ե աշխատանքը այնպես վերակառուցել, վոր այն պարտավորությունները, վորը վերցրել ե պիոներական կազմակերպությունը իր վրա սոցմրցման համամիութենական պայմանագրում լրիվին կատարել։

Գործնականորեն Անդրյերկկյուրոն և Անդրկովկասյան Հողժողկոմատի պլանով պիոներների և աշակերտության ուժերով հարկավոր ե Անդրկովկասում փորել 300 հեկտար պտղատու այգի և 50 գա խաղողի և 10 հեկտար. Զայ։ Անդրպիոներ բյուրոյի սոցմրցման պայմանագրում նախատեսված ե, վոր պիոներները և աշակերտները 500 փութ բանջարեղեն և 250 շուշի կոկոնները։

## ԻՆՉՈՒՄՆ Ե ԿԱՅԱՆՈՒՄ ԱՇԽԱՏԱՆՔԸ.

1. Միջամտել կարևոր որգանների առաջ այգիների և բույսերի շեֆություն վերցնել հետամնաց և չոգտագործված այգիների առուները վերանորոգելու և փորելու ազատելով այգիներին քոլերից և փշերից օգնություն հասցնել պտղաբար սովխոզ կոլխոզներին, նոր խաղողի այգիներ ստեղծելու շաբաթորյակներ կազմակերպել վորին մասնակից անել բոլոր յերեխաներին օգնելու սովխոզներին։

Կազմակերպել քաղաքի դպրոցներից բրիգադաներ, վորի ուժով պայքարել բոլոր գյուղատնտեսական վնասատուների դեմ նամանավանդ այգիներում (մկների ճիճուների և այլն) աշխատել ազատվել այն վնասա-



տուններից վորոնք տերևները փչացնում են (մտնելով կոկոնների մեջ փչացնում են բերքը)։ Նույնպես աշխատել ծառներին կարևոր պարիսպներ խփել ապահովելով այգին անասունների վնասներից։ Աշխատել բանջարեղենների համար այգիներում ձմեռանոցներ պատրաստել, վորպեսզի նրանք չփչանան նաև օգտակար թռչունների համար բներ ձմեռ ապրելու համար, սովորեցնել նրանց կերակրելը և այլն։

## 7-ՐԴ ՄԱՐՇՐՈՒՏ

1931 թվում գարնանացանի կամպանիայի ընթացքում այգիների և վարելահողերի քանակը ավելացվում ե 19,850 հեկտարով, անցյալ տարվա համեմատ արդեն հավասարվում ե և 50—950 հեկտար այստեղից հենց հարկավոր ե պարզել թե ինչքան ե, անհրաժեշտ պայքարը վնասատուների դեմ և առհասարակ բանջարեղենների և բույսերի, այդ պայքարը պետք ե մղվի 12,000 վարելահողում, այս տարի 31 թվում գետնախնձորի վարելահողը 128,000 հեկտարից ավելացվում ե 59 հեկտարով։ Այդ խոշոր աշխատանքը միմիայն կարելի յե տանել այն ժամանակ յեթե կարողանան կազմակերպել բանջարաբուծական կոլխոզ-սովխոզներ։ Համամիութենական պայմանագրի համաձայն Անդրպիոներ բյուրոն վորոշել ե, վոր բոլոր դպրոցներին և կոլխոզներին կից կազմակերպել 500 բոստան (բախչա)։

## ԱՅԴ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՁԵՎԸ.

Սերմացուներ հավաքել ամենակարևորն ե, յերեխաները պետք ե համոզեն իրենց ծնողներին տալ սովխոզներին ավել սերմացուներ նամանավանդ կուլտու-

բակլան բույսերը սերմերը, որից հետո հարկավոր է մշտական հաճախակի գալ և ստանալ սերմ։ Ամենակարևոր աշխատանքը պետք է տանել քաղաքից 20—25 կիլոմետր հեռավորության վրա գտնվող գյուղերի պիոներները և դպրոցականները։ Ուժեղացնելով հասարակական բացատրական աշխատանքները բանջարաբուծական սովխոզներ կազմակերպելու մասին միևնույն ժամանակ քաղաքի պիոներները պետք է գտնեն համար վայր քաղաքի բանվորների համար բանջարեղենի վայրեր գտնելու և բոստանները վարել, անպայման օգնել կոլխոզներին և սովխոզներին իրենց բանջարանոցներում և բոստաններում վարելու ժամանակ ի նկատի ունենան բոլոր ագրո միջոցները հողի պարարտացման ջրի արխերի պատրաստումը մոխրի և այլն աղբերի բերեն թափեն իրենց բախչեն բույսերը բուսնելուց հետո հավաքեն քարերը և խախանը։

## 8-ՐԴ ՄԱՐՇՐՈՒՏ

Հացահատիկի պրոբլեման գյուղատնտեսական բոլոր հարցերի բանալին է տնտեսական բոլոր հարցերի վորոշելու խնդրում. (Ստալին):

Անդրկովկասում բոլոր հացահատիկային վարելահողը հանդիսանում ո 1931 թ. 879,5 հազար հեկտար, հացի պայքարը պիոներ և դպրոցականների համար ամենակենտրոնական հարցերից մեկն է. 8-րդ մարշրուտի աշխատանքները բաժանվում են 2 ճյուղերի.

1. Գարնանացանին պատրաստվելու հարցը ծանոթանալով կոլխոզների, սովխոզների, գյուղի գարնանացանի ծրագրի հետ, լարել բոլոր ուժերը այդ պլանը հասցնելու մինչև գյուղացու տունը։



Ագիտացիա մղել, վորպեսզի գյուղացիները ունենան իրենց գարնանացանի ծրագիրը լրիվ և ժամանակին կատարելու համար, նույնը անել կոլխոզնիկներին նույնպես և գեղջկուհիներին. Ժողովներում դընել գարնանացանի ծրագրի հարցը գյուղացիության ուշադրությունը հրավիրել պլանի իրագործմանը, այդ աշխատանքները բացատրելու համար օգնության կանչել ագրոնոմներին, տեխնիկներին, ուսուցիչներին և մյուս կուլտուրական ուժերին։ Պիոներներից և դպրոցական ջոկատներից բրիգադներ կազմել գարնանացանի համար սերմացուներ հավաքելու, նամանավանդ նոր կազմակերպվող կոլխոզները և այն տնտեսություններից, վորոնք նոր են մտնում կոլխոզները աշխատել բոլոր հավաքած բոլոր սերմացուները մաքրել սերմազտիչով։

2. Համաձայն պայմանագրի, ամեն մի դպրոց և պիոներական օղակ պետք է դասավորման յենթարկի և զտի մի տոնն (61 փ.) սերմացու այնպես, վոր Անդրկովկասում պիոներները և դպրոցականները սովխոզների ուժեղ սարտիրովկայի յենթարկեն 500 տոնն. Թունավորի պետք է 125 տոնն, և նույնպես պետք է աշխատել, վոր բոլոր գյուղացիները իրենց ցանելու սերմացուները մաքրեն և թունավորեն։

## ԳԱՐՆԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

1. Պիոներները և դպրոցի աշակերտությունը պետք է կազմակերպել աշխատանքը սերմազտիչ մեքենաների վրա, վորի ժամանակ այնպես անել. վորպեսզի մեքենան աշխատի հերթական կարգով գիշեր և ցերեկ. և բոլոր մաքրված սերմացուի և նրա թիվը գրել և կպցնել աչքի տեղ, վոր գյուղացիները տեսնեն և կարդան։

2. Նույնպես հարկավոր է պիոներների ուժով մաքրել անհատական գյուղացիների սերմացուները մշտական ունենալ սերմազտիչ մեքենայի մոտ ջոկատ, վորը ժամանակին մաքրված սերմերը տանի իր տիրոջ տունը:

Հողերը պարարտացնելու համար սալասին բրիգադա կազմակերպել գյուղացու աղբը և մոխիրը դաշտ տանելու համար, այս բոլոր աշխատանքները պետք է կատարվի հարվածային կարգով:

## ՑԱՆՔՍԸ ՍԿՍՎԵԼՈՒՆ

1. 100 տոկոսով սերմացուն թունավորել ամեն ողակ պայմանագրի համաձայն, պիտի թունավորի կես տոնն սերմելու (15 փ.) Անդրկովկասում 1,250 տոնն, սերմացույի թունավորումը պիտի կատարվի ագրոնոմի անմիջական մասնակցությամբ և ղեկավարությամբ:

2. Ցանքսի սկզբում թեթև հեծելազորի ուժերով ստուգել սովխոզների և կոլխոզների բոլոր արդյունաբերական և գյուղատնտեսական մեքենաների ժամանակին պատրաստ լինելու գործը, նաև մանիկների վերանորոգում, այդ ստուգումից հետո հասարակական ցույց կազմակերպել և գործնականում ցույց տալ գյուղացիներին կոլեկտիվների աշխատանքի ուժը:

2. Պլան կազմել վնասատուններին ոչնչացնելու համար, շեֆություն վերցնել կոլխոզների խոշոր արտերի: Դաշտային աշխատանքների ժամանակ հիմանդանոցի և սանիտար քույրերից բրիգադա կազմակերպել, առաջին օգնություն հասցնելու: Ուժեղացնելով հենց դաշտում հասարակական առողջապահական աշխատանք: Հանելով գյուղից դաշտ թերթեր և այլ կուլտուրական բաներ:



# Գ-ՐԴ ՄԱՐՇՐՈՒՏ

Կուսակցության և կառավարության ամենակարևոր խնդիրներից մեկն էլ այն է, վոր Անդրկովկասում ցանել 250 հազար հեկտար բամբակ և նրա բերքատվությունը հասցնել 8,5 ցենտ. պիոներ կազմակերպությունը այս հարցում պիտի իր մասնակցությունը ունենա և պլանը կատարի 100 տոկոսով: Բոլոր կուլտուրական բույսերից առաջին տեղն է բռնում բամբակը, այդ խոշոր աշխատանքը ընկնում է բամբակային շրջանների պիոներական կազմակերպության վրա:

## ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

1. Մասսաների մեջ ագիտացիա մղել բամբակի պլանի իրագործումը արտասահմանի բամբակ մթերելու կախումից ազատվելու լոզունգի տակ, բամբակի պլանը աշխատել հասցնել ամեն մի կոլխոզնիկ և վոր կոլխոզնիկ բամբակացան տնտեսությանը, հասցնելով նրան բամբակի ոգտավետ և կարևոր լինելը աշխատել, վորպեսզի ամենալավ և ջրովի հողերը բամբակ ցանվի, դուրս քշելով այդ դաշտից ցորեն, գարի և մյուս կուլտուրաները, ցանելով միայն բամբակ:

2. Ուժեղացնել պայքարը կուլակի և նրա բոլոր կողմնակիցների ագիտացիայի դեմ պատրելով նրա դիմակը բոլոր աշխատավոր գյուղացիության առաջ:

## ԱՇԽԱՏԱՆՔԻ ՅԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ

1. Բամբակի սերմացուի վորակի և նրա ժամանակին բուսնելուն վերահսկիչ լինել պայքարելով սերմացուն փչացողների դեմ: Ոգնություն կազմակերպել

բամբակի սերմը ցանելուն պատրաստվելով պիոներների ուժերով թղթե բաժակներ բամբակի բույսի համար և օգնել բամբակի հողը պարարտացնելու և մի շարք ագրոմիջոցների դիմել։

Շեֆություն վերցնել ջրային կանալներ մաքրելու, օգնել ջրային տնտեսությանը, ժամանակին ջուր հանել, կռիվ մղել բոլոր բյուրոկրատների դեմ, վորոնք կուսակցության վորոշումը ջրային քաղաքականության նկատմամբ չեն կատարում. չմեղմացնել կռիվը նրանց դեմ, ովքեր ջուրը փչացնում են և խանգարում ջրային կարգապահությունը։

2. Պայքար 100 տոկոսով ցանքսի պլանի կատարումը և նրա լայնացման համար, հետամնաց շրջաններին օգնություն հասցնել աշխատանքի մղելով շըրջանի հողբաժնին, բրիգադներին և այլն. պիոներներից ջոկատներ կազմակերպել վնասատուների հետ կռվելու համար, կապ պաշտպանելով շրջանի վնասատուների հետ կռվող շտաբի հետ։

## ԱՆԱՍՆԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

Անդրկովկասյան կառավարության վորոշմամբ ընդհանուր անասունների ավելացումը պիտի հասնի անցյալ տարվա նկատմամբ 5,5 տոկ., բարձր անասուններ 4,5 վոչխարներ, 7,6 խոզեր, 53 տոկ.։

1931 թվին պիտի հասնի 50,000 գլխի «Ովցեվոդ» վոչխարապահ սովխոզներում. 100.000 գլուխ և «Սվինեվոդ» խոզապահ սովխոզում 9,000 գլուխ։ Վորոշված է, վոր 31 թվին ամբողջ դաշտերը հասցնել 115 հազար հեկտար. դրա մեջ և ցանքախոտերը (1930 թ. նկատմամբ ավելացրած է 63,8 հեկտար) այդ հարցի շուրջը հասարակական կարծիք պետք է ստեղծեն, վորը խո-



շոր նշանակություն ունի գյուղատնտեսության բնագավառում։ Համամիութենական պայմանագրի համաձայն պետք է աշխատել անասունների կերի ցանքսը տրեղլացնել 200-ից վոչ պակաս, զարգացնելով կերի կուլտուրական ճյուղերը։ Պիոներները պետք է վերցնեն 4,000 խոզերի շեֆության և ճուտերի 3,000, պահելու ռացիոնալ կերպով։

## ԱՌԱՋԻՆ ՀԵՐԹԻՆ ՀԱՐԿԱՎՈՐ Է.

1. Ուժեղացնել բացատրական աշխատանքները կոլխոզնիկների և անհատականների միջև լայնացնելու կերի կուլտուրան անասունների համար, գարնանը կերակրելու համար հատուկ կերերի մսուրներ պատրաստել։ Պիոներները պետք է շեֆություն վերցնեն այս տարվա ուժեղ միջոցներով յերկու հազար գլուխ խոզերի և նրանց 3,000 ճտերի վրա ուժեղացնելով աշխատանքը նրանց կերակրելում, ջրելում, մաքուր պահելում աշխատելով ճուտերը առողջ մեծանան չթողնելով նրանց սպանել մսի համար ժամանակից շուտ և այլն։

2. Մասնակցել կերախոտերի վայրերի հավաքելում և նրանց ջրելու գործին կոլխոզների՝ համար կեր հավաքելու հողամասեր և կուլտուրապես պաշտպանելուն օգնել, սիլոս պատրաստելու համար ուժեղացնել բացատրական աշխատանքները։

## 10-ՐԴ ՄԱՐՇՐՈՒՏ

1931 թվի գարնանացանի կամպանիան Անդրկովկասում պետք է անցնի կուլտուրական բույսերի ցանքսը։

1. Կանեփ 11,8 հազար հեկտար սոյա, 50 հազար հեկտար բամբակը 8,7 հազարից ավելացնել մինչև

50. 051

30,000 հեկտարի և մնացած կուլտուրական բույսերը ավելացնել մինչև 274 հազարի հեկտար, բամբակից հետո խոշոր նշանակություն ունեն այս բույսերը խորհրդային արդյունաբերության զարգացման համար։

## ԳՈՐԾՆԱԿԱՆ ՄԱՍ.

Ուժեղացնել բացատրական աշխատանքը կոլխոզնիկների և անհատական գյուղացիների մեջ կուլտուրական բույսերի նկատմամբ կառավարության վորոշումը կատարելու. մասսայական ստուգումը կատարել և օգնել կուլտուրական բույսերին սերմացուներ պատրաստելու համար։

Ամեն մի պիոներական օղակ իրա ուժերով մի հողամաս պետք է կուլտուրական բույսեր ցանի և գորկադրելով այդտեղ ամեն մի ագրո միջոցներ դարձնելով որինակելի գյուղացիների առաջ ցանած կուլտուրական բույսերի ցանքսը։

## ԴԵՊԻ ԿՈՒԼՏՈՒՐԱԿԱՆ ՀՈՂԱՄՇԱԿՈՒՄԸ ՅԵՎ ԴԵՊԻ ԲՈԼՇԵՎԻԿՅԱՆ ԲԵՐՔԸ.

Ամեն մի պիոներ պիտի լավ հասկանա, վոր միմիայն կուլտուրական հողամշակումն է բերքը ավելացնում 2—3 անգամ, և միևնույն պետք է հասկացնի գյուղացուն և կոլխոզնիկին։

Շերամի զարգացման համար հարկավոր է թթի տերևների պահպանմանը հետևել և ամեն կերպ աշխատել նրան ազատել վնասատուներից։

Հասարակական կարծիք ստեղծել մեղվաբուծության շուրջը մեղվանոցների առաջ ծաղկանոցներ բաց անել, [illegible] լինել ամբողջ քթոցների առաջ ջուր լինի. ձմեռը քթոցները փաթաթել, վորպեսզի տաք լինի, միևնույն ժամանակ թույլ չտալ ծնողներին քթոցներից մեղր հանելու, թողնել այդ ձանձերին ձմռան պաշար։

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀԱՍԽ-[illegible] ССР